


Հաստատում եմ



«Մեհրաբյանի անվան բժշկական
քոլեջ» ՄՊԸ բժշկական
քոլեջի տնօրեն

Լ.Մեհրաբյան

ԲԵՆԶՄԱՐՔԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՄՊԸ բժշկական քոլեջի գործունեության ռազմավարական կարևոր ուղղություններից է կրթության որակի ապահովումը: Ներկայումս միջազգային պրակտիկայում լայն տարածում է ստացել կրթության որակի գնահատման նոր գործիքը՝ բենչմարքինգը, ինչը նշանակում է տարբեր ուսումնական հաստատությունների առաջավոր փորձի համեմատական վերլուծություն՝ լավագույն ռազմավարությունների և ուսումնական հաստատության մրցունակության բարձրացման նպատակով: Կրթության ներկայիս հարափոփոխ միջավայրը ստեղծել է նոր պայմաններ և իրավիճակներ, որոնցում ՄՈՒՀ-երը պետք է կարողանան արագ արձագանքել փոփոխություններին՝ պահպանելով դասավանդման և ուսուցանման, գիտահետազոտության տրամադրվող կրթական ծառայությունների որակը: ՄՈՒՀ-ի բենչմարքինգի (համեմատական վերլուծության) իրագործումը հնարավորություն է տալիս գնահատելու կայացված որոշումների, ընտրված ռազմավարական ուղիների արդյունավետությունը և նպատակահարմարությունը, ինչպես նաև ապահովել ՄՈՒՀ-ի շարունակական բարելավումը:

Սույն փաստաթուղթը նկարագրում է Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջի բենչմարքինգի (համեմատական վերլուծության) քաղաքականությունը և ընթացակարգը:

2. Բենչմարքինգ


2.1 Նպատակը

ՄՈՒՀ-ի քաղաքականության նպատակն է ազգային և միջազգային լավագույն փորձի բացահայտման, ինչպես նաև վերլուծության միջոցով որակի ապահովման համապատասխան մեխանիզմներ ներդրել և այդ ճանապարհով խրախուսել որակյալ կրթությունը: Համապատասխան ընթացակարգ ունենալու դեպքում հնարավոր կլինի ապահովել համակարգված, միասնական մոտեցում ՄՈՒՀ-ի բենչմարքինգի քաղաքականությանը և որակի ապահովմանը:

2.2 Բենչմարքինգի իրականացման ալգորիթմը

Բենչմարքինգը ներքին կազմակերպական գործընթաց է, որի նպատակն է բարելավել հաստատության որակը՝ ներդնելով այլ հաստատություններում բարձր արդյունավետություն ունեցող գործընթացներ, որոնք կարող են նպաստել ՄՈՒՀ-ում իրականացվող ամենատարբեր գործընթացների բարելավմանը:

Կրթության ոլորտում նպատակահարմար է օգտագործել Ռ.Կոմպի կողմից մշակված և միջազգային պրակտիկայում արդեն իսկ փորձարկված բենչմարքինգի անցկացման 10-փուլանոց ալգորիթմը:



2.3 Գործարկման շրջանակը

Սույն ընթացակարգը կիրառելի է ՄՈՒՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից (ուսումնական մաս, առարկայական ցիկլային հանձնաժողովներ, կենտրոններ): Սույն ընթացակարգը նկարագրում է բենչմարքինգի հիմնական գործընթացի կազմակերպական հիմունքները: Ընթացակարգում նկարագրված չեն այն գործընթացները, որոնք իրականացվում են ՄՈՒՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից (համապատասխան կայքերի ուսումնասիրություն, հրապարակված համեմատատական տվյալներ և այլն):

2.4 Բենչմարքինգի սկզբունքները

ՄՈՒՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրականացվող բենչմարքինգի ծրագրերը պետք է.

- Բխեն ՄՈՒՀ-ի ռազմավարական խնդիրներից և ուղղություններից,
- Նպատակ հետապնդեն ուսումնասիրելու լավագույն փորձը, բենչմարքինգի արդյունքների հիման վրա բարելավել գործընթացները,
- Լինեն արդյունավետ,
- Նպաստեն կրթական գործընթացների համադրելիությանը համապատասխան ոլորտի ընդհանրական քաղաքականությանը,
- Նպաստեն բարելավմանն ուղղված այլընտրանքային միջոցառումների իրականացմանը,
- Տեղեկատվության փոխանակման ընթացքում պահպանեն գաղտնիությունը,
- Տեղեկատվությունը կիրառել միայն բենչմարքինգի նպատակներին համապատասխան,
- Բենչմարքինգի ընթացքում մշակված տեղեկատվության նկատմամբ հեղինակային իրավունքները պետք է քննարկվեն և գրանցվեն համապատասխան գործընկերների կողմից:

3. Բենչմարքինգի գործընթացի կառավարումը

3.1 Բենչմարքինգի նպատակով համագործակցող հաստատությունների ընտրություն

Բենչմարքինգն իրականացնելու համար կարևոր նախապայման է համապատասխան գործընկերոջ ընտրությունը: Այդ նպատակով համագործակցից ՄՈՒՀ-ը պետք է.

- Ունենա համադրելի առաքելություն, ռազմավարական նպատակներ և խնդիրներ,
- Ունենա համադրելի ուսանողների և դասախոսների, ինչպես նաև համապատասխան ռեսուրսների քանակ,
- Ունենա տեղեկատվության փոխանակման ցանկություն,
- Ցուցաբերի բենչմարքինգի թիրախային ոլորտում լուրջ առաջխաղացում,
- Ունենա որակի ապահովման համապատասխան մեխանիզմներ և որակի բարելավմանն ուղղված քաղաքականություն,

- Ունենա միջազգային մակարդակում որոշակի գործունեություն՝ միտված կրթական գործընթացների բարելավմանը և առաջավոր փորձի ներդրմանը:

3.2. Բենչմարքինգի գործընթացը

- Բենչմարքինգի գործընթացի նախաշեմին, այն իրականացնող ստորաբաժանումը պետք է իր աշխատանքները համակարգող ուսումնական մասի վարիչին ներկայացնի մանրամասն տեղեկատվություն իրականացվող բենչմարքինգի առարկայի, գործընթացի նպատակի, խնդիրների մասին, հիմնավորի դրանց ՄՈՒՀ-ի ռազմավարական խնդիրների հետ համահունչությունը, բենչմարքինգի համագործակիցների շրջանակը:
- Բենչմարքինգի գործընթացի իրականացման համար ֆինանսական ռեսուրսների անհրաժեշտության պարագայում, այն նախապես համաձայնեցվում է ՄՈՒՀ-ի ղեկավարության հետ: Այդ պայմաններում, նախապես, վերոնշյալ փաստարկների հետ մեկտեղ կազմվում է նախահաշիվ և ներկայացվում հաստատման:
- Ուսումնական մասի վարիչի միջոցով վերոնշյալ փաթեթը փոխանցվում է Որակի կենտրոն՝ ՄՈՒՀ-ի ռազմավարական, զարգացման և որակի ապահովման խնդիրների հետ համահունչության վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով,
- Բացասական կարծիք ներկայացնելու դեպքում այն պետք է ամբողջությամբ հիմնավորված լինի որակի կենտրոնի կողմից: Անհրաժեշտության դեպքում կազմակերպվում են հանդիպումներ՝ բենչմարքինգի գործընթացը նախաձեռնած ստորաբաժանման ներկայացուցիչների հետ:
- Դրական կարծիքի հիման վրա, համապատասխան ուսումնական մասի վարիչի կողմից գրավոր համաձայնություն ստանալուց հետո, անհրաժեշտ է համագործակից հաստատության/հաստատությունների հետ կնքել Հուշագիր՝ բենչմարքինգի առարկայի/առարկաների, փոխանակվող տեղեկատվության շրջանակի, յուրաքանչյուր հաստատության ներկայացուցիչների իրավասությունների վերաբերյալ:
- Բենչմարքինգի գործընթացը պետք է գրանցվի ՄՈՒՀ-ի համապատասխան գրանցամատյանում, որի կառավարումն իրականացնում է ՄՈՒՀ-ի Որակի կենտրոնի կողմից
- Տեղեկատվության համադրության և համեմատության հիման վրա կազմվում է արձանագրություն և հաշվետվություն՝ բենչմարքինգի արդյունքների և ստացված տվյալների վերաբերյալ:
- Հաշվետվությունը ներկայացվում է մեթոդական խորհրդի և ուսումնական մասի վարիչի հաստատմանը:
- Հաշվետվությունը պարտադիր ներկայացվում է նաև որակի կենտրոն
- Բենչմարքինգի արդյունքում կազմվում է միջոցառումների ծրագիր՝ միտված ուսումնասիրվող ոլորտի բարելավմանը և նոր գործընթացների ներդրմանը:
- Յուրաքանչյուր տարվա ավարտին համապատասխան ստորաբաժանման ղեկավարը, իր ստորաբաժանման տարեկան զեկույցում, ներկայացնում է բենչմարքինգի արդյունքների և նախանշված ծրագրերի վերաբերյալ հակիրճ հաշվետվություն: